



# Ա Բ Ա Ր Ա Ս

Թիի Զ.—Երջան ԺԳ.

1880

ՏԱՐԻ ԺԳ. ՅՈՒՆԻՍ. 30.

ՄԱՐԴԻ ԻՒՐ ՎԻՃԱԿԻ ՍՏԵՂԾՈՂՆ ԻՒՐ ԿՈՂՄԻՑ:

Մահկանացու մարդիս վիճակն ու կեանքը իւր ստեղծված օրից սկսած պատերազմ է, որ քաշած նեղութիւններին ու աշխարհիս ամենայն անհաստատ ու անցաւոր բաններին յաղթելով, անմահութեան փափազի:

Երեխան աշխարհ է գոլիս թէ չէ, նորա առաջին բանը լացն է, իւր բալոր մատաղահաս հասակին մէջ սովորեցնումեն, խրատու մեն նորան հնագանդ լինել և ուսում առնել: Այրական հասակի մէջ մահկանացու մարդս պէտքէ հոգսեր անելով, նեղութիւններ ու չարչարանքներ քաշելով իւր ապրուստի համար քարեքար, պատէպատ զարկվի: Չէ լինում, որ նոր նոր նեղութիւններ, դժուարութիւններ, անյաջողութիւններ միմեանց վերայ չգան, և նա այդ իւր վիճակին մէջ պէտքէ միտք անէ ու իւր համար ձանապարհ գտնէ իւր վաստ զրութենից զուրս գալու: Մինչև անգամ ծերացած, ոյժից ընկած ու թլլիկած հասակում աշխարհս մարդիս չէ մեղքանում, և նա իւր հանգստութիւնն միայն գերեզմանի մէջ է գտնում:

Ասուուածային իմաստութիւնը չէ կամեցել, որ մարդս ծոյլ հանգստութեան մէջ իւր կեանքն անց կացնէ: Նորա համար նորան առնել է ազատ կեանքը, որ ինչ որ կարօղէ, անէ, տուել է նորան խելք, որ լաւն ձանաչ ու ընտրէ: Այսու մինչև անգամ կարիքների խիստ օր էնքներով իթան է է տուել նորան, որ իւր թուլութիւնն ու ծուլութիւնը մի կողմ զնէ և իւր բանական հոգուն պարզեած ձիրքերն բանեցնելով, իւրեան լաւ վիճակի տէր անէ: Պաշտի կենդանիներին մորթ և հագուստ է տուել, թուչունին փետուրներով ծածկել, որ ամեն մի տեսակ օդի միոխիսութեան ժամանակ, իւրեան պահպանել կարողանայ, բայց մարդին թողել է մերկ: Ստոր արարածներին պարզեել է բնական զէնքեր, որ իւրեանց թշնամինե-

րից պաշտպանվել կարողանան. բայց մարդս այնպէս ստեղծված է որ ոչ մի բնական գէնք չունի, որ ցուլի եղջիւրներին առիւծի ճանկին, ընձու ոյժին, օձի խայթոցին ընդդիմանայ, Դորա տեղը մարդիս տուել է խելք ու միտք. Ինքն պէտքէ հնարէ, զանէ ու ձեռք բերէ իւր հագուստը բնակարանը և զէնքերը. մի խօսքով, ամեն մի իւրեան հարկաւոր բանը ինքն պիտի հոգայ, Երկնային իմաստութիւնն կամեցել է հարկազրել նորան, որ իւր խելքի ու մտքի ոյժերը բանեցնէ, որ վերջապէս բոլոր արարածների տէրը գառնայ, անպատուղ երկրից իւր սնունդը հանէ, ձեռք բերէ ընկերութեամբ բնակելու համար տներ, զիւղեր ու ամուր քաղաքներ չինէ, նուև իւր ապահով ապրելու համար, և ընկերական կամ հասարակական կեանքի համար օրէնքներ սահմանէ:

Եւ որովհետեւ Աստուծու կամքով ամեն մի մարդ, իւր ոյժերն բանեցնելով, ինքն պիտի պատրաստէ իւր վիճակն ու դրութիւնը աշխարհիս վերայ, ուրեմն ծուլութենից յառաջ եկած մի բարեպաշտութիւնն է, որ մի մարդ իւր գործը շկատարէ ու երեսի վերայ իւր անելու բանն թողնէ, յօյս կապելով, որ Աստուծած առանց իւրեան ու առանց իւր աշխատութեանն ևս ինչ որ բարին է և օգտակարն, կպարզեէ, նշնպէս սիսալ մի յօյս զնել ու հաւատալ է Աստուծուն, որ մարդս իւր խելքին զնումէ թէ իւր մահից յետոյ մի ժամանակ յաւխենական երջանկութեան մասնակից լինելու համար, բաւական է որ ապաւինէ Փրկչի մեզ համար ունեցած արդինքին, Աստուծու ողորմութեանն ու սուրբերի բարեխօսութեանն, փոխանակ մի խիստ ամենայն առ արինութիւններով, նեղութիւններով, բարեգործութիւններով ու հասարակաց օգուտ բերող կեանք անց կացնելու:

Բայց որչափ որ ամենայն բան Աստուծուց յուսալ ու սպասել, իսկ իւրեանից ոչ մի բան կամ լաւ համարելն ու յօյսով կենալն, որ իւր երկրաւոր բարօրութիւնն ժամանակի բաղդաւոր բերմանքից ստանայ իրրե իւր բազզն ու վիճակը, քան թէ իւր ջանասիրութիւնից ու աշխատասիրութիւնից, քան թէ կարգով, կանոնով, չափաւորութեամբ ու խնայողութեամբ ապրելուց. նշնպէս յիմարութիւն կիններ միւս կողմից ևս, անձնապաստանութեամբ մտքում զնել, որ ամենայն բան իւր ձեռին է, իւր ոյժի վերայ է կապած, ինչ որ կամենայ կարող է անել, ինչ ևս որ կամենայ, կարող է ձեռք բերել, իւր ամեն կամեցածին կարող է հասնել. Առանց Աստուծու ինչպէս փոքր բան ենք մենք, ինչպէս խելք ենք մենք մէջ տեղը, երբ որ նորա օր հնութիւնն մեր աշխատութեան վերայ չէ լինում, կամենումեմ ասել թէ, երբ որ նա ամենայն հանգամանքներն այնպէս չէ առաջնորդում, որ այն բանը, ինչ որ մենք աշխատութիւն ու քրտինք ենք թափում, խելք ու սիրա մաշում, ու անում, զլու իւրում, մեզ համար օգտակար լինի ու մեր բարուն ու երջանկութեանն համար լինի՛ Զուր տեղն է երկրագործը ոյժ ու քրտինք թափում լինում, երբ որ նորա անդի ու արտի վերայ սաստիկու վեսարակար անձրեւներ են դալիս, ցանքը մեծ մեծ քամիների հանդիպում, ու կարկուտը տալիս

փշացնում։ Զո՞ւր ենք մեր մտքում՝ զբած լինում։ մեր կամ մերերի բաղ-  
դաւոր լինելուն ու ապրելուն համար, այս այն բանը անելու։ յաջողեցնե-  
լու։ այդ միջոցում՝ պատահումեն փորձանքներ, մեր մտքից անց չկացրած  
ձախ բաներ, մէկնես տեսնես ամեն բան փոխվումէ։ նոր կերպարանք ստա-  
նում։ մեր մտքում՝ զբած բաները մեր մտքում՝ մնում։ կամ ծալումնք ու  
մէկ կողմը դնում։ Սորա համար է միլիօնաւոր փորձերով հաստատված այն  
խօսքը, որ ասած է թէ խորհուրդ մարդկան կամքն Աստուծոյ, այսինքն է,  
թէ մարդս շատ բան կարող է մտքում դնել անելու։ բայց բանն առաջ-  
նորդողը, յաջողեցնողը Աստուծած է։

Ամենամեծ բաներն, որ մեր կեանքում՝ պատահումեն, շատ անգամ հե-  
տեւանք են այն մի հանգամանքի, որի վերայ ամենից քիչ էինք ու շք դար-  
ձնում ու բանի տեղ դնում։ Նոյնպէս շատ անգամ այն բանը որի վերայ  
ամենից շատ ենք ջանք ու խելք բանեցրել ու չարշարվել, մեզ ամեն բա-  
նից քիչ օգուտն է բերում։ Այս մինչեւ անգամ մեծ մեծ թագաւորների  
վիճակն կախված է եղել շատ անգամ, ինչպէս որ սովորաբար ասումեն,  
մի փոքրիկ ու աննշան պատահմունքից, որով մարդիկների լոլոր զօրու-  
թիւնն ու խելքը խոյտառակվել է։

Ի՞նչ է ասում ու ի՞նչպէս պէտք է հասկանանք այն խօսքը, որ շատ ու  
շատ անգամ մեր ականջը լսումէ։ Տարբա է-ը Քի-ն-է առեղջողն է, որ ասել է,  
թէ մարդիս վիճակը իւր ձեռին է, լաւ է թէ վատ, իւրեանիցն է։ շատ  
մեծ ու խելք խօսք է։ այն խօսքերից հասարակ, կամ դատարկ չէ, որ  
սովորաբար ասվումէ ու խել ես, չես լսել վեաս չումի, մի բան չկայ մէջը  
ուշադրութեան արժանի։ Այս վիճակ ասելով ոչ թէ պէտք է հասկանանք  
միայն այն ամենայն բանն, ինչ որ մեր ձեռին է անելն ու չանելը։ այդ  
դեռ ևս մեծ բան չէ ու զորանով ամենեին չէ վերջանում։ մեր լաւ կամ  
վատ զրութիւն մեզ պատրաստելն ու ունենալը։ Այլ վիճակ ասելով  
պէտք է հասկանանք այն բաները, որ մեր ոյժից բարձր է, կամ այն, որ  
մեր խելքին դնումենք և կամենումենք, որ մեր իշխանութիւնը անկարելի  
բաների վերայ ևս տարածվի։ Խնչպէս որ հողեղէն մարդիս բանը չէ ու չէ  
կարող նա ձեռն երկինքն բարձրացնէ, հասցնէ և արեգակին իւր ընթացքի  
մէջ արգելք լինի, կամ կանգնեցնէ, կամ թէ աստղերին իւրեանց ճանա-  
պարհն փոխել տայ և ուրիշ կողմերով տանէ։ ուրիշ ուղղութիւններով  
նոյնպէս ևս մարդիս ձեռից չի գոլ և ոյժը չի յաղթիլ, չի պատիլ մինչեւ  
անգամ իւր իսկ մարմին առողջութեան ու հիւանդութեան վերայ խր իսկ  
կեանքի ու մահի վերայ իշխանութիւն ունենալ։ կամ բանեցնել։ Այս  
ամեն բանը նորա ոյժից ու կարողութիւնից բարձր է։ Անկայն այս ևս ա-  
սենք, որ նորա ամենալաւ վիճակի մէջ լինելը ամենեին ոյս ասած ամեն  
բաներումն չէ։

Բայց ոչ թէ միայն մարդիս մարմինն է ու ինչ որ մարմինն է վերաբե-  
րված ու նորա համար է, ոյլ մարդիս հոգին է, որ ինքնաշխատաւթեան  
զործի ու զործունէութեան է կոչված։ Միայն թէ նորա շափն ու սահմանը

տարածվում ու հասնում միայն իւր իսկ անձի վերայ։ Եթէ որ խօսում նա մի վիճակի մասին, որ ինքն իւր համար ստեղծելու կերպով պատրաստել կարող է, նորա այդ ասած խօսքը պիտի հասկանալը իւր անմահ հոգու բարուն կամ չարի մոքով։ Իւր իսկ վիճակը մարդս կարող է պատրաստել, իւր ձեռին է, նորա համար նշանակութիւն չունին, նորա հետ կապ չունին, իւրեանից կամ իւր կամքից ու ցանկութիւնից զուրս եղած յաջող թէ անյաջող, լաւ թէ վատ հանգամանքն, որ կարող են բազգաւորութիւն թէ անբաղութիւն բերող լինել։

Այս մոքով պիտի հասկանանք, այս մոքին պէտք է բերենք մեր մարդկային բոլոր կեանքում թագաւորող օրէնքը թէ ամենայն բորբոք բու էր բարձր հեռանաներն անի, և պէտք չու բու պէտք իւր չու հեռանաներն անենայ, և վերջը նուն էրեան էլուցնէ, Բայց բարին Աստուծու կամքն է, որ մեր խըզամանքով մեզ յայտնած է, չարն օրէնքի սրբութիւնն, արհամարհելն է, մարմական ու դգայական յատկութիւնների համար։

Ով որ միայն բարին է կամենում և անում, այն մարդը անթիւ անհամար բորբոք հեռանաներէ ստեղծողն է զառնում։ Ամենայն օրինաւոր ու արդար գործ, որ մենք մի ազնիւ սերմի նման մեր կեանքի մեզ ցանումնք, մեզ յետ է բերում ու տալիս մեր ցանածն, մեզ բարիք պաղարերելով։ Կարելի է պատահի, որ մենք, հակառակ մեր արդար ճանապարհով բանած գործին, մեր կողմից ջան ինայելուց յետ ևս, աշխարհային բարիքից զուրկ ու աղքատ մնանք, կամ մինչև անգամ պատահի, որ մենք, մեզ վերայ տիսրութիւն բերող հանգամանքներով, մեզ համար լաւ ու բաւական կայքի կամ փողի աէր եղած ժամանակն, մեր ունեցածն ևս կորցնենք, Բայց այս պատահմունքը մեր Ճշմարիտ բաղդասորութեան ու բարօրութեան վերայ չէ կարող խանգարելու կերպով ազգեցութիւն ունենալ։ Մի միայն նա, ով որ իւր իսկ ներքին արժէքը, զինը սաստիկ քիչ է ճանաչում, նա միայն երկրաւոր բարօրութիւնը կորցնելով կարող է ասել թէ տունս քանդվեցաւ, պրծաւ, ու յաւիտեան կորցնէ իւր սրտի հանգստութիւնն ու այլ ևս ոչ մի բան աշքին չգայ, ոչ մի բանով այլ ևս գոհ չըինի։

Ամեն բարի բան անշուշտ իւր անսիստ բարի հետեանքն ունի։ Այս այս հետեանքներն յայտնի են լինում ոչ միայն մեզ երջանկութիւն պատճառող այն մեր զգացմունքի մեջ, որ մենք մեզ Աստուծու զաւակներ ենք ճանաչում, մոքներից անց կացնելով, որ այս աշխարհիս բոլորովին երազի նման կեանքի երազի նման ևս անցնելուց յետը մի անհամեստ փառաւոր վիճակի պէտք է արժանանանք ու հասնինք, այլև յայտնի են լինում այս հետեանքներն մեր երկրաւոր հանգամանքների վերայ ևս։ Օրինաւոր, Ճշմարիտ, արդար մարդն, իւր նման մարդիկների հոգով ու սրտով բարի կամեցողն ու անողը, օգնութեան կարօտ մարդիկների բարերարն, կոռից, Թշնամութիւնից, անհամաձայնութիւնից հետու փախչողն, համեստ ու պարկեցած հոգին, որի համար ամբարտաւանն իւր զործովին աշքի զբողն ու մաշն է — արդեօք ամենքի կողմից ու ամեն կողմից մանաւանդ

իւրեան ճանաչողներիցն, հաւատարմութիւն ու սէր չէ տեսնում։ Եթէ որ նորան մի անբաղդութիւն է պատահում, ամեն մի մարդ նորա զլիին եկածի վերայ սրտանց չէ ցաւում ու նորան ամեն կերպ միսիթարելու հոգով ուրախ ու պատրաստ չէ լինում։ Կամ ով չէ պատուամ մի կնոջ որ իւր տանն ու մէջի բնակօղների ամենի համար սիրող։ Լաւ բան ցանեկացող, բարի կամեցող, հոգացող, ամեն կերպով ամենալաւ բարեկարգութիւն պահպանող մայր է։ Ո՞վ չէ պատուամ նորա ասաքինութիւնը իւր զաւակների հետ կենցաղավարելում։ Իւրեան ծանր պահելով ու ոչ մի ժամանակ չթեթեւացնելովն, ծառայողների հետ մարդասիրաբար ու մի բարեկամի նման վարվելում ախորժ։ Հաւանելի կերպով տիս ու ճանաչ մարդիկների հետ գուռ դրացու հետ կարգին ու վարքին կին ճանաչվելում։ Որ իւր պարկեշտ ու համեստ բնութեամբ ամենեին մոքիցն ևս մի օր չէ անց կացնուամ թէ ինձ պէս կող ուրիշ աչքով պէտքէր նոյէին ու շատ պատիւ պէտքէր տային ինձ։

Ուրեմն եթէ կամենումես քո աւելի լաւ վիճակի ստեղծօղը լինել, ոչ հոգս, ոչ միտք արա, սիրող նեղանալով։ Քո գործիդ հետեւանքի մասին, բայց հոգս քաշիր միայն, որ քո գործերդ բարի, ճշմարիտ, օրինաւոր գործեր լինին, Ամեն բան քո ձեռիցդ շի դալ, որ անես։ Քո ձեռիցդ կզայ միայն բարի ու Աստուծուն և մարդիկներին ընդունելի գործի մի փոքր բաժինը զլուխ բերել քո ձեռովդի խելքովդ, ցանկութեամբով, ջանքովդ այն բարի բանի մի մասն անել, որ յառաջ չկար մէջ տեղը և որ զու ցանկանումէիր, որ լինի աշխարհումն։ Ամեն մի մարդ իւր բաժինն է վերան աւելացնուամ։ մէկը անկումէ, միւսը ջրումէ։ բայց աճեցնողն Աստուած է, Ամեն մի մարդ իւր գործովն իւր վարձն կոտանաց։

Ըստհակառակն չար բանն ևս, — այսպէս է Աստուծու օրէնքը, — իւր չար ու վատ հետեւանքներն ունի և ինքն իւրեան պէտքէ կորցնէ փշացնէ։ Այս յաւիտենական ճշմարտութեան ներգործութիւնն չեն հաստատում արդեօք մէր կեանքի ընթացքի մէջ տեսնված փորձառութիւններն։ Նայեցէք պատուի ետեկց խելքն տանել տուած մարդի վերայ։ Նա պատուի համար արած անընդհատ պատերազմների պատճառով ունեցած շարունակ անհանգստութիւնների մէջ չէ արդեօք իւր հոգին աւանդում։ Նայեցէք ժլատ մարդի վերայ։ Նա այն ծարաւն է, որ ջրի աղբիւրի մօտը ծարաւութիւնիցն է մեռնում։ Նայեցէք անառակ կեանք անց կացրած մարդի վերայ։ Նորա չենք ու շնորհը նորա հանգած աչքերը պատմումն էնդ մեղքերի մէջ թաղված, կորած ու փշացրած նորա կեանքի պատմութիւնը։ Նայեցէք արրեցողի վերայ։ իւր մոլութեան գցնն զրոշմած է իւր երեսի վերայ մարմի վերայ տաքացրած երկաթով զրած կնքի պէս։ բոլորովին թմրած բանականութեամբ ու բժացած զգայարաններով զնումէ նա ժամանակից յառաջ դէպի գերեզման։ Նայեցէք նենգաւոր, խորամանկ մարդի վերայ։ Նորանից հետու են փախչում։ Նա ճշմարիտ բարեկամ ոչ մի մարդ չունի. Նայեցէք հզարտութեամբ շռայլ կեանք անց կացնող մարդի վե-

բայց նա հարսնութիւնից ընկնառմէ ու պէտքէ ողորմութիւն խնդրողի Նը-  
ման օդնութիւն խնդրէ այն մարզիկներից, որոնց մի ժամանակ մարդ էք  
չէր ասում։ այնքան բանի տեղ չէր գնում։

Ենչիցն է, որ մի մի մարզիկ իւրեանց կեանքի մէջ ոչ բոլորովին բաղ-  
դաւոր են լինում և ոչ բոլորովին անբաղդի Նորանից, որ նորա ոչ այն-  
քան մնլութիւնների մէջ են թաղված, որ բոլորովին չար ու վատ մարզիկ  
ճանաշվին, և ոչ այնքան սիրտ ու քաջութիւն ունին, որ բարի բան ձեւ-  
ներից գայ ու անեն։ Այդպիսի մարզիկը հաստատ մոքով ու քայլերով  
ուղիղ իւրեանց գնալու տեղն գնալ չկարողացող իւրեանց միտքն ու Ճա-  
նապարհն փոխաղների նման, առաքինութեան ու մնլութեան մէջ անհաս-  
տատ են, սորա համար ևս միշտ գոհ ու դժգոհ կեանք ունին, ոչ հաստատ  
ուրախ ու լաւ օրեր են տեսնում և ոչ իւրեանց զլիսին պատահած ցաւե-  
րից ազատ մնում։ Կամենումեն բուրդուն բաղրես, պէտք չէ բա-  
ւականանաս միայն իւրաքի լինելովդի այլ բոլոր սրտովդի բոլոր ունեցած  
զօրութեամբուդ բարի եղիր։

Մոլութիւններին յանձնված մարզն, իւր թշուառութեանն, իւր չիւան-  
դութիւնների, իւր անհանգստութիւնների, իւր յուսահատութեան ստեղ-  
ծողն է, Ո՞վ կարող է ուրանալ այս ասածն ու հակառակել խօսքիս։  
Այսպէս ևս առաքինի, արդար մարզն մի անվըդով գոհ վիճակի ստեղծողն  
կարող է զառնալ, այնպիսի մի գոհ վիճակի, որ մարզկային զօրութիւնն  
այլ ևս նորանից խլել չէ կարող։

Այս աստուածային մեծ նպատակին հասնելու համար, սովորեցրու քեզ  
միշտ այն միտքը անելու, որ դու այս աշխարհիս վերայ ուրիշ ոչ մի բա-  
նի համար չես ապրում, այլ միայն քո Աստուծուգ համար, որ այս կեան-  
քում ոչ մի բան քոնդ չէ, բացի հոգուցդ, որ դու ոչ մի բան կատարե-  
լու չես, բացի քո երկնաւոր կոչմանդ պարտականութիւններիցդ, ու միտք  
արա, որ մնացած ամեն բանը, վիճակ, կամ կացութիւն, արժանաւորու-  
թիւններ, հարստութիւն ու ուսումնականութիւն, գեղեցկութիւն ու յա-  
ջաղակութիւն, ձիրքեր ու շնորհներ, քո կեանքի միակ, բարձր ու վերջին  
նպատակին հասնելու միջոցներն միայն սլիմի լինին։ Սովորեցրու քեզ այն  
միտքը անելու, որ դու այս աշխարհիս մէջ ուրիշ մի բան չես, բայց միտքն  
ու խա գնացաղ մի մարդ, որի գնալու, հասնելու տեղը երկար ժամանակ չի  
քացի ու հեռու ևս չէ, որ յիշոյ շուտով պիտի յետ զառնաս, որ քեզ  
երկնաւոր հայրդ մի յանձնարարութիւն է միայն արել ու վերադ պարտք  
զրել, որ գաս այս աշխարհու ու կատարես, ու յիշոյ նա քեզ յետ կկան-  
չէ։ Սովորեցրու քեզ միտք անել, որ քո բոլոր ունեցած երկրաւոր բա-  
րերդ քեզ յանձնած այսպիսի մի քանքար է, որ դու, զերեզմանիդ զրանը  
որ հասար, զարձնուլ յետ պիտի տաս։

Եթէ լաւ խելքիդ տեղ արել ու սրտիդ խորն տպաւորել ես այս մեծ մը-  
տածմանքը որ Քրիստոսի մէջ տուած ուսման և խրատների մէջ ամեն  
աել տեսնվումէն, այն ժամանակ բոլոր աշխարհը քո աշքիդ ուրիշ կերպ

կերեի, քան թէ պյուղէս, ինչպէս որ մինչև ցոյժմ ճանաշել ու հասկացել էիր. Այն ժամանակ դու կքաշվիս, կզզուշանաս քո մարդիկ ընութիւնից յառաջ եկած ցանկութիւններին հպատակելու, նոցա կամեցածն անելու իրրե նոցա ծառայ, դու կսարսափիս այդ ցանկութիւններից ու յետ կը քաշվիս ահը սրտումդ մարիցգ անց կացնելով, որ Աստուած քեզ ինչ բանի համար որ այս աշխարհս է ուղարկել, այն բանը անկատար պէտք թողնես. Այն ժամանակ դու իսկական իրը իւր ստուերից կզանազնես. պարզ կհասկանաս, որ դու մի կարճ ժամանակ ուրախութիւնների համար ծնված չես նոյնպէս ես այս կեանքիդ այս. կարճ կեանքիդ քիչ օրուայ տրտմութիւնների, հոգսերի, ցաւերի համար միայն աշխարհ չես եկել, այլ նորա համար որ Աստուծու հետ միասին աշխատես, գործ կատարես բոլոր մարդկային ազդի երջանկութեան համար. Այն ժամանակ լաւ կհասկանաս այն խոր միտք ունեցող խօսքերը, որ Քրիստոս մեր Տէրը ասել է և որոնցից շատ ու շատ բան պէտք սովորենք. «Ճեր ջանքն ու հոգսը, ամեն բանից յառաջ Աստուծու արքայութեան համար պիտի լինի ու նորա արդարութեանը համար մնացած ամեն բանը կաւելանայ ձեզ» Աւրեմ, երբ որ ուտելու և հագնելու բան ունիք, այդքանով բաւականացէք».

Կարելի էր որ մի մի մարդիկ կասեն թէ շատ խիստ են երեւում այս պատուերներն սոցա մէջ մարդիս ուրախութիւն բերող զրեթէ մի բան չէ տեսնվում. Կարելի էր որ ասեն թէ աշխարհս այսպան ու այսպէս զեղեցիկ ու քաղցր լինի, ինչպէս որ էր ու մենք ինչի՞ համար կին ժամանակի ապաշխարողների, — ինչ եմ ասում, — ճգնաւորների նման մեզ ամեն բանից պէտք զրկենք ինչ որ անհատ անպակաս տռատ կերպով մեզ համար մեր առաջին զրած էր, որ վայելենք լաւ կեսնք ունենանք, քաղցր օրեր տեսնենք».

Դու, որ այս զրած տողերս կարդումես, ով հս ով շես ծուռ մի՛ հասկանար խօսքերիս խսկ միտքը: Ամենից լաւն այն կլինի, որ չխալվելու համար ասած Քրիստոսի խօսքերն եւր գործերի հետ համեմատենց պատճառ որ նորա արած գործերի մէջն է ամենալաւ ու ամենապարզ կերպով հասկացվում նորա ասած խօսքերի միտքն ու նշանակութիւնն: Աչ մի տեղ գու շես տեսնիր որ Յիսուս Քրիստոս աշխարհից հեռու էր քաշվում: Հրաժարվում կամ աշխարհը ուրանումէր, որ ճգնաւորի նման անպատճերը գնայ, մնայ այլ աւելի պատահումէ, որ տեսնումես նորան շատ անգամ մարդիկների հետ, նոցա մէջը նոցա քաղցր ու կենդանի ընկերութեան մէջ զտնվելն ու նոցանից հետու չմնալն իւր մարդկային զգացող սրտովն ևս: Նա ուրախների հետ ուրախանումէր, տրտմածների հետ տրտմում, բայց սորա հետ միասին նորա մտքում միայն մի բան կայ, որ է, իւր քաղաքակիցներին փրկէ ու երջանկութեան հասցնէ: Սորա համար նա նոցա իւր գործովն տուեց այն մեծ օրինակն, որն իւր տուած ուսման մէջ քարոզումէր. որ է, այս աշխարհիս բարեկը շատ փաքք ոչինչ բան համարել, որ մեր անմահ հոգու փրկութիւնը ձեռք բերենք: Նա, Որի առաջին բաց էր թա-

զաւորական ամոռոի ճանապարհն, աւելի ուրախութեամբ ու սէրով աղքատութեան մէջ մնաց. Նա, որ իւր ազգի իւրեան տուած ամենից մէծ պատուի մէջ կարող էր վայելել աշխարհիս ամենամեծ բազդաւորութիւնը, իւր յօժար կամքովն յանձն առաւ խաչի անարդ ու խայտառակ մահն, իւր Հօր փառաւորելու մարդկային ազգը կատարելութեան հասցնելու համար էր անում. Նա ամենայն բանն. Հոգու մաքրութիւնն ու խղճմառանքի հանգստութիւնն նորա համար մարդիս գոյութեան ու կեանքի ամենաբարձր ու ամենընտիր նպատակն. Էր, Սորանով Նա ամենայն կիրապով ու բոլորովին իւր վիճակի ստեղծողն եղաւ ու երկնաւոր նպատակին հասաւ, իսկ մնացած ամենայն բաներում, որ երկրաւոր մեր կեանքի համար էր, աներկմիտ աղօմք էր անում թէ Հայր, ոչ իմ, այլ Քո կամքդ լինի:

Այսպէս և մենք կարող ենք մեր վիճակի ստեղծողն լինել, ոչ թէ մեր մարմաւոր, այլ մեր հոգեոր վիճակի համար եմ ասում. ոչ թէ ժամանակաւոր ու անցաւոր մեր վիճակի վերայ է խօսքս, այլ մոքինս մեր հոգեոր վիճակն է, որ ոչ մի ժամանակ վերջ չունի: Կորոշ էս բարի ու աղնիւ լինել կարող ես յստակ սրտի մարդ լինել, իբրոշ էս Աստուծուց խաղաղութիւն գտնել, եթէ որ կամենաս, եթէ որ ծուռ ճանապարհ թուղնիս, ուղիղ ճանապարհով ման զաս, կամ բարի, աղնիւ, սրտովզ մաքրու լինելուդ համար ու Աստուծուց սրտիդ ու հոգուզ խաղաղութիւն, մաքրիդ հանգստութիւն գտնել արժանանալուզ համար, մինչեւ քո մահզ պատերազմս: Արտաքին աշխարհի վերայ ոչ մի իշխանութիւն չէ տուած քեզ ու չունիս, բայց զորա տեղը աւելի քեզ երանկութիւն բերող մի իշխանութիւն է տուած, որ քո ներքին աշխարհի, քո միտքդ, սիրտդ, քո զգացմունքդ ու քո բանականութիւնդ, մէկ խօսքով, քո հողիդ, քո հոգուզ վիճակը բարւոքելու, բարեկարգ զրութեան մէջ պահելովզ, միշտ աւելի և աւելի լաւացնիս: Բայց պատերազմից փախչել կամ քեզ հեռու պահել չես կարող. պէտք պատերազմս: Առանց ջանքի ու ծգունքի, հանգիստ ու առանց շարչարանքի, որպէս և առանց զոհողութեան աշխարհիս մէջ ոչ մի բան չէ յաջողում, մանաւանդ մեր կատարելութեան հասնելու զործը: Պէտք պարապ շմանք, զործ կատարենք, բայց միանգամայն և աղօմք անենք, որ Աստուծու օրէնքը մեր արած բանի վերայ լինի և մեզ միշտ կարողութիւն, զօրութիւն տայ: Այս խօսքերումն է աշխարհիս մէջ ամենայն բարօրութեան հասնելու ու մտնելու ծածուկ զրան բանալին ու այս աշխարհիս մեր աչքը փակելու ժամանակին մեր ամենայն ունենալու յոյսի գաղտնիքը:

(Թագէժ. )

Գլ. Եպ. Աղ.